

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԵՍԱՅՈՑ ԱՍԵԼԻՔՆԵՐ ¹⁾

1.

Աղէքսանդրապօլում ամպը որոտալու ժամանակ երեխայքը,
մէջքը պատին քսելով, արտասանում են.

Ամպը գուռաց
Մուկը ճագաց,
Մալքամ խաթուն
Թախտը նստաւ:

2.

Ղազարի Ուրուսթայա գիւղում:

Ա' կնանիք,
Եկէք, գնանք Ձըրթմակը,
Ձըրթմակայ ճամփէն դեօրն ա,
Ալա քօլի խնձեօրն ա,
Խնձեօրը կճեմ ծուլ անեմ,
Զիզի հարսին կուլ անեմ,
Պատրիք անեմ պատ քցեմ,
Սաղրուն (ձիու գաւակը) նի ըլեմ (հեճնեմ) չափ քցեմ:

3.

Դարալագինգի խաչիկ գիւղում, ցուրտ եղանակին, երբ
արեւը թագնուած է ամպերի լետու, երեխայքը կամենալով
տաքանալ, աշխատում են դուրս կանչել արեգակին:

¹⁾ Տես «Ազգագրական հանգէս», գիրք VII և VIII:

Արև, արև, եկ, եկ,
 Զիզի քարին վեր եկ,
 Հորն ընկնեմ, ձորն ընկնեմ,
 Կարմրագիգիկ դուրս ընկնեմ,
 Քու հէր, քու մէր եկել ա,
 Թուր ու Թուանք բերել ա,
 Գոմշու ոտին տուել ա,
 Դուան տակին հորել ա,
 Մուկն եկել ա, հանել ա,
 Կատուն ետնէն վազել ա:

4.

Նոյնը Ջարուրի խանլըխլար գիւղում:

Արև, արև, եարի,
 Դալա բարադ էկիրի,
 Ոսկի Թանան պիրիլի,
 Ծառը տակը դրիրի,
 Աքլեօրն էկէ՝ կնըճէ,
 Կոր քեալն էկէ՝ կոխըճէ,
 Տէրտէրն էկի օխսիրի,
 Տիրօխսին էկէ՝ լացիրի
 Կնեաց խօրնը մօրը ճիւր տալ իկեալ,
 Սողոտղիկ, դողդողիկ,
 Մէ տաք արև տու տաքնամ:

5.

Նոյն խանլըխլար գիւղում և Հին-Նախիջևանում աղքատ
 գերդաստանի մասին ասում են:

Կար մէ իրիկ,
 Կար մէ կնիկ,
 Զինեցին թաղէ տնիկ,
 Աւլին գիղան մէ կոր պլիկ,
 Էն էլ տուին ծամունի,
 Ծամունն եկաւ մուկը տարաւ,
 Զքեաթ, շքեաթ, մուկն ի շքեաթ
 Զարկին մկան պոչը կրին:

6.

Դարալաղեացի բնիկ Հայերի մէջ ցուրտ եղանակին:

Յուրա ա, ցուրտ ա,

Մօլլէն քիւրդ ա,

Տէր տէրը Հայ ա,

Քուսլի թայ ա:

7.

Նոյն տեղում գիրտոցը կտրելու Համար:

Քեռին եկաւ պակր,

Սև պտուկը շալակը.

Պտուկն ընկաւ, կոտրվաւ,

Քիրթիկը կտրվաւ:

8.

Երևանում եթէ երկուսը իրար կենաց խմելով, ուշադրութեան չեն առնում ուրիշներին, աղաղակներին մասին ասում են:

Սաղաթը խմեց Մաղաթին,

Մաղաթը խմեց Սաղաթին,

Մեռնեմ ձեր անկարգ աղաթին:

9.

Երևանի շրջակայ գիւղերում աղջկունք ասում են:

Հայ, Հարայ անգա } ներքին ճնօտ.
Կոտորուեց տանգա

Մէկ պատաւ աղջիկ

Ընգել ա ճանկս.

Ծեծում եմ, լալիս ա,

Կանչում եմ զալիս ա,

Սիրում եմ խօսում չի:

10.

Հին Նախիջևանում նոր նշանուած երիտասարդի Համար ասում են:

Փեսայ, փեսայ, փեսացնեմ,

Դուան տակը նստացնեմ,

Մի ճով Հացով կշտացնեմ,

Մի թաս գինով զժուացնեմ,

Երկու բարձով քնացնեմ:

11.

Դարալազեացի Հին և նոր Հայերի մէջ պտտւում է մի
անէկզոտ մի քահանայի ու նորա տիրացուի մասին, որ Հրա-
ւիրուած են եղել մի աղքատ Հիւանդ կնոջ ճաշակելու և քա-
հանան շարականի երգեցողութեամբ Հասկացրել է տիրացուին,
որ պառաւ. Հիւանդի կացինը գողանայ:

Ք Ա Հ Ա Ն Ա Ն

Մոնթիկ, մոնթիկ,
Առջի քոնթիկ,
Նաչիր պառւի գլխատակին,
Կացինն առ դիր կունատակիդ,
Ողորմեա քո ստեղծուածոց
Յուսով ի քեզ ննջեցելոց:

Պ Ա Ռ Ա Ի

Տէր տէր, տէր քահանայ
Փորդ մտնի սև սատանայ
Առ քո օրհնանքն ու յետ գնա,
Թող մեր կացինը մեզ մնայ,
Ողորմեա քո ստեղծուածոց,
Յուսով ի քեզ ննջեցելոց:

12.

Նոյնը Դարալազեացի նոր Հայերի բարբառով:

Ք Ա Հ Ա Ն Ա Յ

Ինդա կացին,
Դաան տակին,
Վերու, կոխա
Մէջ տոպրակին:

Տ Ի Ր Ա Յ Ո Ւ

Պոճն երկան է անիրաւի,
Չի պարտկուիր
Մէջ տոպրակին:

Ք Ը Հ Ը Ն Ա Յ

Վէրու, տար,
Զարկ ընդա քարին,
Պոհը կոտրա
Մէջ տոպրակին:

13.

Նոյն Հայերի մէջ Հարսն սկեսուրի Հետ կուռելուց յետոյ:

Կեսուր ինձի զրկիրի,
Ընթրոցով մրկիրի,
Կեթամ խանին դատ կանեմ,
Ճօշ տունը վերան կանեմ,
Փստիկ տունը շէն կանեմ:

14.

Դարալագեաղի Էրզաւիին գիւղում, երեխայոց խմբից ճանապարհ դնալու առաջ ընկնողների Համար ասում են:

Առջին, առջին
Գէօյարջին (աղաւնի)
Դայադ (մօրդ) բռնի
Կոր չարջին:

Իսկ յետ մնացողների Համար ասում են:

Խոին, Խոին,
Խամը կծի,
Խարիր մանգաղ
Դայուդ կցին:

15.

Դարալագեաղի Քարազլուխ գիւղում աղջկունք վերվեր թռչկոտելով երգում են:

Խըշ, խըշ, Իզդա (փշատ) խըշ,
Իզդա բըզըմ բադդա խըշ,
Ես խսանի (Հիւսնի) թոռն եմ,
Կիր Մարանի խարսն եմ,
Կինդս ընկաւ բըլըխտօր, (անչաչտ բառ)
Պախի, Հաչ պախի:

Ալ արբշում կճիսի,
Գեղի ըռէս խէրիկս ի,
Տայք տանտիկին մէրիկս ի,
Քեարկան դռան քեռիս ի:

16.

Նոյն տեղը երեխայք միմեանց խարդախութիւնը տեսնելով:
Սատանայ, հայ սատանայ
Պոշիդ, տակը տիտանայ
Քանի զարկեմ խաւտանայ,
Աղջիկներուն մօտանայ,
Պառաւներին զատանայ:

17.

Ջարուրի Ուլիանորաշէն գիւղում խաղին չմասնակցող երե-
խային բարկացնելու համար ընկերները ասում են:

Ջրուպօ, զրուպօ, զրուպ անեմ,
Ճախայկ թալեմ՝ խըրկ անեմ:
Իսկ չմասնակցող երեխան պատասխանում է.
Ընկերս պէ,
Կորկոտս կէ:

18.

Գարալագեազի Ազատակ և միւս գիւղերում:

Ա.

Էս քշեր մէ երազ եմ տըսէ,
Ղամբար գեօլերն եմ լողցէ,
Մէ կուց աւազ եմ կողցէ,
Տէր տէր, մեղայ Ասորճու:

Բ.

Խաւերը մտան կեօրծի խորը,
Աղուէսն է կերաւ խարսի փորը:

Գ.

Ծարէք էթանք ինձի,
Մէ փարա տանք բրնձի,
Ես քէ թալեմ, դու ինձի:

Դ.

Հալայ, հալայ, բալլարի,
Ըլդըմ սալամ բալլարի.
Ես լուսնակ, դու արև:

Ե.

Ձաղանայ չաղչաղանայ,
Մալէ, մալէ, դարկէ դարկէ,
Սև սամաթեռ օղն ու կօճակ,
Մէ բողոճակ թեխ վեր դուռը:

19.

Նոյն զիւղերում կորուստ որոնող երեխայքն ասում են:

Սատանայ, սատանայ,
Ինչ կիտեր ես՝ եարի կիսենք,
Չատը քեզի, քիչն ուր է.
Սատանայ, սատանայ,
Ջարկեմ, պոչիդ տակը փետանայ:

20.

Նոյնը Ալէքսանդրապօլում:

Սատանայ,
Պօչիդ տակը բանըմ կայ,
Կէսն ընձի, կէսը քեզի:

Նոյնը Ջամախի:

Սըտանայ, մտմտանայ,
Մին զադիկ ամ կորցրալ,
Նայիզը քիթի, ինձի տուր:

21.

Երևանի կողմերում երգում են.

Հէքեաթ, հէքեաթ, պապս ա,
Ղաշղա քուսակ տակս ա,
Հեճնեմ, էթամ Երևան,
Էրևանայ կուտ բերեմ,
Կուտը տամ հաւերին,
Հաւերն ինձի ձուձու տայ:

Ձուձուն տանեմ դարփինին,
 Դարփինն ինձի շղփինկ տայ, (անկոթ դանակ)
 Զղփինկ տանեմ, հարսներին,
 հարսներն ինձի գաթայ տան,
 Գաթէն տանեմ չորանին,
 Չորանն ինձի գառը տայ,
 Գառը տանեմ Աստուծոն,
 Աստուած ինձ մի աղբէր տայ,
 Աղբէր, աղբէր, ջան աղբէր,
 Դու բերդի գլխին՝ աղբէր,
 Ես բերդի տակին՝ աղբէր,
 Չալ չալ կոզերն ինչ էլան,
 Նախրատափին գիւմ էլան,
 Մերայ, մերայ, գիշերն արի կաթ կթի,
 Կաթը դրի կրակին,
 Ման եկայ չալ տօրակին,
 Այ գալըմ աղբէրակին,
 Դու իմ աղբօրն ինչ արիր,
 Քէ դնեմ իշի քուռակին,

22.

Դաւալու գիւղում, գարնանը, երեխայքը խմբուլին դաշտ
 զբօսանքի գնալու ժամանակ ասում են.

Չա, չա, յալթուկ չա,
 Չալթուկ փռեմ չորանայ,
 Տամ հաւերին կուրանայ,
 հաւերն ինձի ձուձու տան,
 Ձուձուն տանեմ դարփինին,
 Դարփինն ինձի շղփինկ տայ,
 Զղփինկ տանեմ հարսին,
 հարսն ինձի գաթայ տայ,
 Գաթէն տանեմ չորանին,
 Չորանն ինձի գառը տայ,
 Գառը տանեմ Աստուծոն,
 Աստուած ինձի աղբէր տայ,
 Աղբէր, աղբէր, ջան աղբէր,

Ջանս քէ ղուբբան աղբէր,

Դու բերդի գլխին աղբէր,

Ես բերդի տակին աղբէր,

Բերդը պլուցին, աղբէր,

Կինին թափեցին, աղբէր:

23.

Ղազախի Ուղունթալա զիւղում:

Հէքիաթ, Հէքիաթ էս պապս,

Ղաշղա քուռակ էս տակս,

Գնացի ձուլաւէր,

Տեսաց մի հլիվեր (ալեոր)

Մտաց մի ճաղաց,

Միջին մի կտաղած,

Մի հաց ունէր մկան կերած,

Մի հարան ունէր թոնրի էրած.

Լինզը քաշեց կոճերն աղաց:

24.

Ալէքսանդրապոլում.

Հէքիաթ, Հէքիաթ պապս,

Ղաշղա քուռակ տակս,

Հեճնեմ, էրթամ էրեան,

Կինի խմեմ, գիրանամ.

Հաւերիս կուտ ու ջուր տամ,

Հաւերս ինձի հաւկիթ տան,

Հաւկիթը տանեմ խառատին տամ,

Խառատն ինձի շուի տաց,

Զուլին տանեմ չորնին տամ,

Ձորանն ինձի գառ տաց,

Գառը տանեմ Ասճուն տամ,

Աստուած ինձի աղբէր տաց,

Ողբէր, աղբէր, ջան աղբէր,

Դու բերդի պատին աղբէր,

Ես բերդի տակին աղբէր,

Ջաքար մաղեմ, կեր աղբէր:

25.

Ջարուրի Ուլիա նորաշէն գիւղում խմբուած երեխայքը
Հանելուկները ասած վերջացրած, այլևս չեն գտնում, ասում են.

Խանելիւք, խանմանելիւք,

Քեզի խանեմ մէ բալաք ձմերուկ (գոյնզգոյն):

26.

Նոյն գիւղում, գարնանը, առաջին անգամ ամպը որոտա-
լիս, երեխայքն աչքերը դէպի երկինք, ձեռքերը լայն բանում
են և ասում երեք անգամ:

«Մեր ծնունդի (խնոցի) կարագը էդ զըդայ ընի»:

Կամ պատի քարը կրծելով՝ ասում են երեք անգամ:

«Իմ ատամները քեզ պէս պինդ ըլի, քար»:

Կամ մէջքը պատին երեք անգամ դիպցնելով ասում են:

«Պատ, իմ մէջքի թուլութիւնը տամ քեզի,

Քու մէջքի պնդութիւնը տու ընձի»:

27.

Նոյն տեղում կարճահասակ՝ մարդուն երեխայք ծաղրում են.

«Ուլի (Յակոբ) կաքաւ,

Վեարդի տափար, (թագնուար)

Փետով զարկեմ,

Փխուր թափար:

28.

Նոյն տեղում ընդունելով, որ կաջադակի (ղաջըլայ) կարկա-
չելը նշան է Հիւր գալուն, երեխայքն ասում են:

Ղաջըլայ, բարով էկար, խազար բարի

Թէ խէր ես, քելի, մէյն էլ եարի,

Թէ շառ ես, ոտդ կոտորուի, էլ մի եարի:

29.

Նոյն տեղում աղջկունք, մի ոտի վերայ պինտ պտտուե-
լով ու փէշերը քամուն տալով, յանկարծ նստում են գետնին և
ասում:

Ոնթրան (անուն).

Պատէն թռամ,

Ինգեամ, մեռամ:

30.

Նոյն տեղում:

Աւաշան (անուն).

Թումաշան. (անուն)

Գնացին, պղտրին բերին քեանս մէ շան

Վեհա էր տըսէ էդ թամաշան:

31.

Ալէքսանդրապօլում աղջկունք վեր վեր թռչկոտալով:

Ելայ էրդիկ, վեր վեր ընկայ,

Խաչքը կոտրաւ, ես նես ընկայ,

Գլօրեցայ, թնդիւր ընկայ,

Ոյտը պուտուկ տօլմա կերայ,

Էլի ըսի՝ չկշտացայ:

32.

Նոյն քաղաքում կարապետ անունով մարդուն ծաղրելու:

Կարապետ,

Կարմիր վարպետ,

Ձան վարդապետ,

Իշու կարպետ:

33.

Նոյն տեղում աղջիկները թռչկոտալով երգում են միասին:

Զփիկ, զփիկ զարն է,

Ալուան ծաղիկն առնէ,

Իմ տալը տախտակումն է,

Կանանչ կապան գլխուն է,

Բերանն առած լեզի է,

Բերնես թափածն զինի է,

Գինի, գինի լաջերուն,

Վարդ մանուշակ հարսներուն,

Տանձ ու խնձոր աղբը կներուն,

Քթոցմ աղը մանչերուն:

34.

Նոյն տեղը խաղացող խումբը ցրուելու ժամանակ:

Ծտի բուն, ծտի բուն,
Երբ պտի մթնի գնանք տուն,
Գնանք տեսնանք հարսը քուն,
Կեսուրը կշտին, քոփակ շուն:

35.

Նոյն քաղաքում աղջկունք զնդակ խաղալու ժամանակ:
Մէկ, երկուս, տասներկեց,
Ես էլ ըսի տասներկեց,
Դուն էլ ըսիր տասներկեց,
Ձեռ հաւատայ, հաճբէ տես:

36.

Նոյն տեղում երեխայքը թռչկոտալով:
Մէկ, էրկուս, չերկրննաս,
Յերեկ, չորս, չորնաս,
Հինգ, վեց, վերնաս,
Օխտը, ութը հւր կերթաս,
Իննը, տասը տուն կերթամ:

37.

Ղազարի Ուղունթալա գիւղում «չիլդի» կոչուած խաղի
ժամանակ:

Սըրմի (կապույտ) վիլա, (օղականման փաթթած թել)
Կուռք թիւ ա,
Ընկերը հետուկ, (ընկերիդ նման)
Աչքիդ ձեռուկ.
Ընկերիդ ճաթէն կտրես,
Բաթինանց Ձատինի կօլօլ աչքն ուտես:

38.

Նոյն գիւղում:

Ա.

Ոչք, բէն,
Տաշտին դմփեմ,
Օխտը պաղարճ խրտըտեմ,
Գնամ գեղը պտտեմ,
Գամ կլեօխդ դմփեմ:

Բ.

Հրէս կկեալ փաւը,
Թաւորճակիս զլաւը:

39.

Նոյն գիւղում, երբ երեկոյեան զէմ, եկեղեցու զանգերը
զարկում են, որպէս զի իմացնեն ժողովրդին վաղուայ տօնը,
երեկայքը ուրախութեամբ թռչկոտում են և ասում:

Եղուց կիրակի,
Էրմանի բնագի,
Չալ հաւը ծրտեց,
Ձուն քամակից շարտեց:

40.

Ճամախու գիւղերում երկ երկու կամ խմբովին ձայնով եր-
գում են ու ծափ տալի.

—Արա հօ, քո մար հօր ա,
«Արա հօ, քեացալ ա Ձաքի.
—Արա հօ, հինչ կըպիրի,
«Արա հօ, դար ու զարբար,
—Արա հօ, ինձ էլ կտանս.
«Արա հօ, պա խէ՞ չլմ տալ:

41.

Նոյն տեղում թևի շարժումը նմանեցնելով ճախարակին
ասում են.

Տըզ, վըզ յխարակ,
Ըս հաստ մանեմ
Դու պերակ:

ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳԵՐ

Ա.

Բասենի գիւղերում գութան վարելիս հօտաղնիքը երգում են:

Խըլլըտուն (առաւօտ) թթու թան,
Պէս օրին ոսպէ վաիկ (ապուր)
Իրիդուան աւելուկի աղցան,
Դէհ, հոռովել արան,
Մուկսի (մահտեսի) գութան:

Բ.

Նոյնը Ղազարի գիւղերում:

«Մաճկալը մաճին,

Դիւռն ընկաճին,

Ճիտ անեմ (գրկեմ) մաճկալի բաջին,

Հորիքը պտտեմ

Մաճկալի բաջին խտրտեմ:

ԱՊԸ:ՈՎՈՒԹԻՒՆ «ԽԱՐԲՈՒՆ» ՑԱՒՑ

Ջարուրի Ուլիանորաշէն - գիւղում ուլ կլամենում է խար-
բուխով չվարակուել, ասում է խարբուխով հիւանդին.

Ճաղցէն եմ իկեալի,

Կլոխս ալրոտ է:

Հիւանդը հարցնում է.

— Դաւան (ուղտը) քանի՞ ոտէն կլլի.

— Ձորս, պատասխանում է առողջը.

— Խազ ու խարբուղս քեզ խէտ փոխս

շարունակում է հիւանդը:

Ե Ր Ե Ն Ա Ն Ց Ն Ա Ղ Ե Ր

1. Մ Ա Ց Ն Փ Ո Ւ Կ

Ա.

Դարալագեաղի նոր հայերի մէջ աղջկունք ժողովում են
և իւրեանց միջից ջոկում են մի գլուխ, որ կոչւում է պապ:
Ապա բոլորն էլ իւրեանց ձեռի ցուցամատը դնում են մի տեղ
և պապն իւր աջ ձեռքի ցուցամատը կարգով դիպցնում է նո-
րանց մատերին և արտասանում է այս խօսքերը:

Ուկուլ, դուկուլ, գինազէ

Ճամիլ, մամէլ պիպազէ,

...

Դանակ սրեմ,

Սև խաւու վիզը կտրեմ.

Վերջին խօսքը որի մատին ընկաւ, մատը բռնում են և
աղջկան ծեծում են, մինչև խոտտուլանի թէ որ տղային պէտք
է ուզէ: